ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ «ՆԱԽԱԳԻԾ-ՀԱՅՏ»

«Գրական թերթ»-ի 1988 թ. երկրորդ համարի երրորդ էջում տպագրվել է ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Արշավիր Թորամանյանի հոդվածը, և ճարտարապետ Սուրեն Պետրոսյանի Երևանում Քարադարան կառուցելու նախագիծ-հայտը: Հոդվածագիրը առաջարկում է «Հայաստանի տարբեր վայրերում, այստեղ կամ այնտեղ սփռված վիճակում գտնվող ... վիշապաքարերը, հուշասյուները, խաչքարերը, մոնումենտալ կառույցների քիվերը, խոյակները, խարիսխները, ... ժայռաբեկորները, ժայռագլուխները, որոնք տեր-տիրական չունեն ...», հավաքել, բերել, ցուցադրել նոր կառուցվելիք Քարադարանում, որ այն «... լավ նվեր կլինի մեր ժողովրդին և մեծ ավանդ ազգային ճարտարապետության մեջ»: Առաջին հայացքից գրավիչ թվացող այս առաջարկ-հայտը իր էությամբ սխալ է, ոչ գիտական և, հետևաբար՝ աննպատակահարմար:

Ինչպես հայտնի է, հուշարձանները, այդ թվում վիշապաքարերը, խաչքարերը, հուշակոթողները իրենց նշանակությունը լավագույնս արտահայտում են գտնվելով իրենց տեղերում, այն շրջապատի պայմաններում, որտեղ ստեղծվել և կանգնել են: Եթե հոդվածագրին լսելու լինենք, կստացվի այնպես, որ ջրի պաշտամունքը և պահպանությունը արտահայտող հսկայաչափ վիշապաքարերը ջրերի ակունքներից, երբեմնի գործող ջրամբարների մոտից, ուր նրանք կանգնած են հազարամյակներով, տեղահանել, բերել, պառկեցնել Քարադարանի հատակին կամ դարակներում և ծանոթագրել, թե դրանք իրենցից ինչ են ներկայացնում և որտեղից են բերվել: Հաղթական ճակատամարտի վայրը բնորոշող հուշակոթողը, կամ քաջ զորավարի շիրիմի վրա կանգնեցված խաչքարը իր տեղից, իր պատվանդանից պոկել (հաճախ վնասելով ու վիրավորելով) բերել Երևան ... Քարադարանում, նրա մի ակյունում տեղակայելու համար, նրան զրկելով այն ողջ արժեքավորից և իմաստից, որ մինչ այդ ունեցել է: Այդ չի՞ նշանակում ժողովրդի հպարտությունը արտահայտող կոթողները պատվազրկել, կործանվածի, սգավորի տեսքով ու դիրքով տեղ հատկացնել «օտարության» մեջ:

1987 թվականի ընթացքում մեր թերթերում ու ամսագրերում զգալի թվով հոդվածներ տպագրվեցին մայրաքաղաք Երևանի հուշարձանների անձեռնմխելիության ու պահպանության անհրաժեշտության վերաբերյալ: Շարունակաբար նշվում էր, որ այդպիսիք տեղափոխելը հակագիտական է, անթույլատրելի: Այս մոտեցումը կրկնակի չափով վերաբերում է բնության մեջ կանգնած կոթողներին: Չի կարելի այդպիսիք տեղափոխել, նույնիսկ՝ դիրքափոխել:

Ավելի արտառոց է ներկայանում «ժայռաբեկորների ու ժայռագլուխների» կտրել-տեղափոխելը, այդ իրավացիորեն կարող է գնահատվել որպես բարբարոսություն: Այն կոթողները, «ժայռագլուխներն ու ժայռաբեկորները», որոնց տեղափոխելն աննպատակահարմար է, նրանց պահպանությունը պետք է կազմակերպել տեղում, շրջապատել ցանցապատով, փակցնել-ամրացնել երկաթագիր տախտակ, որտեղ գրված լինի՝ «հուշարձան է, պահպանվում է պետության և ժողովրդի կողմից»: Այս դեպքում, իհարկե, հուշարձանը փչացնող չի լինի: Ինչ վերաբերում է բնության մեջ կործանված կամ անհետացած հուշարձանների անխնամ ընկած բեկորների պահպանության անհրաժեշտությանը, առարկություն չի կարող լինել: Սակայն այդ էլ պետք է իրականացնել ամեն առանձին դեպքում կոնկրետ, հուսալի և հարմար ձևով:

Մեր օրերում զգալի թվով հուշարձաններ են վերականգնվում իրենց թաղածածկերով ու գմբեթներով: Այդպիսիք առկա են հանրապետության շատ շրջաններում, բնակավայրերի մեջ և նրանց տարածքում: Ահա այդ հուշարձան-շինությունները պետք է լինեն լավագույն Քարադարաններ իրենց շրջապատում անխնամ, «անհասցե» ընկած բեկորների համար: Հանրապետության գրեթե բոլոր շրջաններն ունեն երկրագիտական թանգարաններ: Թանգարաններ ունեն նաև շատ դպրոցներ ու մշակույթի տներ: Դրանցում կան սրահներ, որտեղ պահվում են հնագիտական պեղածոներ և ազգագրական գտածոներ: Այդ թանգարանները նաև օջախներ են նոր սերնդի բարոյադաստիարակչական կրթության համար, հետևաբար պետք է գտնվեն տեղում՝ շրջաններում, գյուղերում: Ամեն ինչ բերել, կուտակել Երևանում, ստեղծել պահեստանման Քարդարան, լինելու բան չէ:

Ինչ վերաբերում է Քարադարանի նկար-նախագծին, ապա անառարկայական կլինի նրա բարեմասնությունների մասին արտահայտվելը, մանավանդ եթե նկատի ունենալու լինենք նրա անմասշտաբ և կառուցվածքային առումով անմշակ լինելը:

Ի վերջո անկարևոր չէ այն, որ այդ ծավալի շինության կառուցմանը հատկացվելիք միլիոններով և շինանյութերով հնարավոր կլինի մեր մշակույթի մի քանի տասնյակ հուշարձաններ նորոգել, կամ վերականգնել: Այ այդ կլիներ շնորհակալ գործ: